Հայկական գիտահետազոտական հանգույց

Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

24426
1 MAR 2010
531·88
Ա-89

## ՊՐՈՖՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՈՒՑԱԿԱԳՐՈՒՄՆ ՈՒ ԱՆԴԱՄԱՏՈՄՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՑԵԽՈՒՄ (ՀԱՆՔՈՒՄ, ՄԱՍՈՒՄ)

(Ցուցակագրողների և ցեխկոմների, հանքկոմների, բանկոմների անդամների համար և այլն)

*Վերացուցակագրման և անդամատոմսերի փոխանակման կազմակերպումը ցեխում (հանքում, մասում և այլն) դրվում է ցեխկոմի (հանքկոմի, բանկոմի) վրա, որոնք գործնական անցկացման համար առանձնացնում են ցեխային բրիգադ։*

*Անդամատոմսերի փոխանակումը ցեխում (հանքում մասում) կատարում է ցեխկոմի (հանքկոմի, բանկոմի և այլն) անդամը։ Միաժամանակ անկետայի լրացումը կատարում է ակտիվիստ ցուցակագրողը։*

Ծանոթություն.— *Առանձին դեպքերում ցեխկոմը կարող է անդամատոմսեր տալու աշխատանքը հանձնարարել խմբկազմակերպիչներին։*

*Զգալի քանակությամբ աշխատողներ ունեցող ցեխերում (հանքերում, մասերում) ցեխկոմը ցուցակագրողներին ամրացնում է մեկ կամ մի քանի պրոֆխմբերի (արտադրական բրիգադների) անխախտ հաշվով, որ յուրաքանչյուր ցուցակագրողին ընկնի 30—40 հոգի։*

*Վերացուցակագրումը կատարելու համար ցուցակագրողին տրվում են լրացված հաշվառման քարտերը՝ նրան ամրացված պրոֆանդամների թվի համեմատ, համապատասխան քանակությամբ անկետաներ և սույն հրահանգը։*

Ծանոթություն.— *Այն միությունների ձեռնարկություններում, որտեղ վերացուցակագրման ենթակա յեն նաև ոչ-պրոֆանդամները, ցուցակագրողին տրվում է նրան ամրացված խմբերում ոչ-պրոֆանդամների ցուցակը։*

*Ցուցակագրողն անկետան լրացնում է հարցափորձի միջոցով. համաձայն ներքոհիշյալ ցուցումների։*

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. библиотека
ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
13160-58

25 FEB 2013
24426

Ոչ-պրոֆանդամների ցուցակում վերացուցակագրումով անցկացած անձանց ազգանունների դիմացը ցուցակագրողն այդ մասին նշանառում է կատարում:

Պրոֆմիության անդամի համար լրացված անկետան հաշվառման քարտի հետ միասին տրվում է ցեխկոմի անդամին, վորը ստուգելով անդամավճարները՝ մարում է հին տոմսը կամ ժամանակավոր վկայականը և տալիս է նոր անդամատոմսը, նախորոք նրա համարը նշանակելով հաշվառման քարտում:

Նոր անդամատոմսերը տրվում են միայն անկետան լրացնելուց հետո:

Ծանոթություն.— Անդամատոմսերի մարումը կատարվում է առաջին յերեսի վրա խաչ քաշելով և ամբողջ յերկայնքով գրելով — «ուժի մեջ չէ»:

Մարված հին տոմսը վերադարձվում է պրոֆանդամին: Նոր անդամատոմսի վերջին «Նշումների համար» յերեսում մակագրվում է «վճարվում է այսինչ ամսվա համար» և տրվում է ցեխկոմի անդամի ստորագրությունը:

Նոր ընդունված պրոֆանդամների համար, վորոնց համար դեռևս հաշվառման քարտեր չեն լրացված, նախորոք ցուցակ է կազմվում և, վերացուցակագրման անցկացման հաջորդությունը նկատառելով, նրանց համար առանձնացվում է հատուկ ցուցակագրող:

Նրանց տրվող տոմսի համարը գրվում է այս ցուցակում:

Ծանոթություն.— Հաշվառման քարտերը նրանց համար կազմվում են անկետայի տվյալների հիման վրա վերացուցակագրումը կատարելուց հետո:

Այն պրոֆանդամները, վորոնք անդամատոմսեր ունեն իրենց ձեռքին, բայց դեռևս գործարանեղկոմի մոտ հաշվառման չեն յենթարկված, վերացուցակագրվում են և տոմսերը փոխում են գործարանեղկոմներում:

Ցուցակագրողին ամրացված բոլոր անձնավորությունների վերացուցակագրումը վերջացնելուց հետո, ցեխկոմի անդամը, ցուցակագրողի հետ միասին, վորոշում է չներկայացողների ազգանունները և պարզում է չներկայանալու պատճառները:

Ցեխկոմը պետք է միջոցներ ձեռք առնի, վոր բոլոր պրոֆանդամները (ինչպես նաև վոչ-անդամները այն տեղերում, ուր այդպիսիք վերացուցակագրվում են) ներկայանան վերացուցակագրմանը և փոխեն անդամատոմսերը:



551.88(47)
Պ-94

Ցեխում վերացուցակագրումը և անդամատոմսերի փոխանակումը վերջացնելուց հետո, ցեխկոմը գործարանեղկոմի բյուրոյին հաշվետվություն է ներկայացնում հետևյալ ձևով.

Ցեխի (հանքի մասի) անունը

| Գործարանեղկոմից անդամատոմսեր ստացածների թիվը | Նրանց համարները №-ից մինչև №-ը ներառյալ | Պրոֆանդամներին ինչքան անդամատոմս է տրված | Քանի պրոֆանդամի տոմս է վերադարձված առանց օգտագործվելու | Նրանց համարները | Վերացուցակագրման յենթակա պրոֆանդամների թիվը | Վերացուցակագրված պրոֆանդամների թիվը |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | |

Ծանոթություն.—Այն ձեռնարկություններում, վորտեղ վերացուցակագրվել են նաև վոչ-պրոֆանդամները, պետք է ցույց տրվի նաև վերացուցակագրման յենթակա և վերացուցակագրված վոչ-պրոֆանդամների թիվը:

Հաշվետվությանը պետք է կցել.

1) Հաշվառման քարտերը՝ տրված տոմսերի համարների նշանակումներով:

2) Նոր ընդունված անդամների ցուցակը, նույնպես տրված տոմսերի համարների նշանակումներով:

3) Չօգտագործված անդամատոմսերը:

4) լրացված անկետաներ ա) պրոֆանդամների համար, բ) վոչ-պրոֆանդամների համար, այն տեղերում, վորտեղ նրանք վերացուցակագրվել են:

5. Վոչ-պրոֆանդամների ցուցակները, յեթե նրանք վերացուցակագրվել են նախորդ վերացուցակագրման մասին նշումներ ունենալով:

Սրա հետ միասին, գործարանեղկոմին տրվում է այն պրոֆանդամների ցուցակը, վորոնք չեն ներկայացել վերացուցակագրման և տոմսերի փոխանակման: Այս ցուցակում այն անձանց ազգանունների դիմաց, վորոնք արձակուրդի կամ գործուղման մեջ են գտնվում, պետք է ցույց տրվի նրանց վերադարձի ժամկետը:

Այդ անձանց վերացուցակագրումն ու տոմսերի փոխանակումն անցկացնելու կարգը վորոշում է գործարանեղկոմը ցեխկոմի հետ միասին:

34390

## ՀՐԱՀԱՆԳ

## ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆԿԵՏԱՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քարտի հասցեյի մասը—միության անունը, ձեռնարկության վայրի անունը—պետք է լրացնել վաղորոք կամ վերացուցակագրումն անցկացնելուց հետո, բայց վոչ հարցուփորձի ժամանակ, հարցաքննվողին յերկար չզբաղեցնելու համար:

Քարտի ձևը հարմարեցված է մեքենայացված մշակման, և կողքերից յեղած ազատ վանդակները չեն լրացվում:

Հարցերի պատասխանները կազմվում են քարտում տպագրված համապատասխան բառերն ընդգծելու միջոցով, իսկ այն տեղերում, ուր բազմակետեր կան, պատասխանները գրվում են:

Ընդգծել հարկավոր է համապատասխան բառը և կողքին (աջից) գրված թվանշանը: Օրինակ՝ քարտի 5-րդ կետում կնոջ համար ընդգծվում է «կին» բառը և «2» թվանշանը, 7-րդ կետում ընդգծվում է «ռուս» բառը և «0» թվանշանը, յեթե հարցաքննվողը ռուս է և այլն:

Այն ձեռնարկություններում, վորտեղ վերացուցակագրվում են նաև վոչ-պրոֆանդամները, պետք է անկետայի վերևի մասում ընդգծել «միության անդամ՝ 1 կամ «վոչ-պրոֆանդամ՝ 2»:

7-րդ հարցում ցույց է տրվում այն ազգությունը, վորին պատկանում է հարցաքննվողը:

8-րդ հարցում—յեթե ՀամԼԿՑԵՄ անդամը միաժամանակ ՀամԿ(բ)Կ անդամ կամ թեկնածու յե, ապա ընդգծվում է միայն ՀամԿ(բ)Կ անդամ կամ թեկնածու և վոչ թե ՀամԼԿՑԵՄ անդամ:

9-րդ հարցին պատասխանում են միայն ՀամԿ(բ)Կ անդամները, չեն պատասխանում թեկնածուները կամ ՀամԼԿՑԵՄ անդամները:

11-րդ հարցում կարդալ իմացող համարվում են նրանք, վորոնք թեկուզ հանգերով կարդում են ռուսերենով, մայրենի կամ վորևէ այլ լեզվով. գրել իմացող չպետք է համարել նրանց, վորոնք միայն իրենց ազգանունը կարող են ստորագրել:

12-րդ հարցում պետք է հաջորդական կարգով թվել բոլոր այն ուսհիմնարկները—դպրոցները, դասընթացները (ներառյալ նաև հեռակա դասընթացները), վորտեղ սովորել է և ներկայումս սովորում է հարցաքննվողը: Ուսհիմնարկների անունները պետք է այնքան լրիվ ցույց տալ, վորպեսզի նրանցով հնարավոր լինի վո-



րոշել տիպն ու բնույթը. օրինակ՝ գյուղական միդասյան դպրոց, քաղաքային 4-դասյան դպրոց, արհեստի դպրոց, ՑԻՏ-ի դասընթացներ, վորակավորման բարձրացման հեռակա դասընթացներ և այլն:

Յուրաքանչյուր ուսհիմնարկի նկատմամբ պետք է ցույց տալ, թե քանի՞ տարի կամ ամիս հարցաքննվողը սովորել է, և անպայման ընդգծել՝ ավարտե՞լ է, դո՞ւրս է յեկել ավարտելուց առաջ կամ սովորո՞ւմ է ներկայումս:

13-րդ հարցում նկատի յեն առնված միայն այն խմբակները, վորոնք նպատակ ունեն ուսումնասիրել արտադրության տեխնիկան վերավորակավորման կամ վորակավորման բարձրացման համար: Այստեղ չպետք է մտցնել անարտադրական խմբակները, օրինակ՝ քաղգրագիտության, յերաժշտական, օտար լեզուների, ֆիզկուլտուրայի, Պաշը-Ավիաքիմի, կարմիր խաչի և այլն:

14-րդ հարցում ցույց է տրվում հոր այն զբաղմունքը (հայրը կենդանի լինի կամ մեռած), վորը յերկար ժամանակ նրա գոյության աղբյուր է հանդիսացել:

Այն դեպքում, յերբ հարցաքննվողը չի դաստիարակվել հոր կենդանին յեղած ժամանակ, պետք է ցույց տալ այն անձնավորության զբաղմունքը, վորի խնամքի տակ գտնվել է նա:

Յեթե հայրը մենատնտես է, պետք է ընդգծել՝ «չքավոր գյուղացի» (և 2 թվանշանը), կամ «միջակ գյուղացի (և 3 թվանշանը), կամ «կուլակ» (և 7 թվանշանը), նայած թե վո՞րն է նա այդ յերեքից:

Յեթե հայրը կոլտնտեսական է, պետք է ընդգծել «կոլտնտեսական» (և 4 թվանշանը):

15-րդ հարցում պետք է ցույց տալ այն պրոֆեսիան կամ մասնագիտությունը (կամ պաշտոնը), վոր ունի հարցաքննվողը ներկայումս: Պրոֆեսիան կամ պաշտոնը պետք է ցույց տալ այնքան ճիշտ ու մանրամասն, վոր կարելի լինի նրանով իմանալ մասնագիտությունը. այսպես՝ բավական չէ գրել «գլուշար», «տոկար», «աշակերտ», այլ անհրաժեշտ է ավելացնել «տոկար-մետաղագործ», «փականագործի աշակերտ» պողպատաձուլ վարպետի աշակերտ» և այլն:

16-րդ հարցում պետք է ընդգծել «բանվոր» կամ «ծՏ աշխատող» և այլն, նայած թե վո՞ր կատեգորիային է պատկանում հարցաքննվողը:

Տարիֆային կարգը նշանակվում է այդ կետի աջ կողմում:

17-րդ հարցում աշխատավարձի գումարը նշանակվում է հարցաքննվողի ասելով: Այստեղ մտցվում են ինչպես սովորական, այնպես էլ արտաժամյա բոլոր վճարումները և դուրս չեն հանվում փոխառության պահումները, հարկը և այլն:

19-րդ, 20-րդ, և 21-րդ հարցերը նպատակ ունեն պարզել հին և նոր կադրերի քանակը, նրանց արտադրական ստաժը, և ինչո՞վ են նրանք զբաղվել մինչև արտադրություն գալը:

Բոլոր այս հարցերը, շնորհիվ իրենց բարդության, հատուկ ուշադրություն են պահանջում ցուցակագրողից: Ճիշտ պետք է սահմանել՝ արտադրության մեջ աշխատել սկսելու տարին, ստաժը և այլն:

19-րդ հարցում նկատի պետք է ունենալ միայն վարձու աշխատանքը արտադրության մեջ (գործարանում, արհեստանոցում, դեպոյում, հանքում, շինարարությունում, տորֆամշակման աշխատանքներում):

Աշխատանքը ոչ արտադրության մեջ, բայց արտադրական զբաղմունքով, օրինակ՝ կինոյի փականագործ, շոգեշարժի մեքենավար, յուղող և այլն, վերաբերում է արտադրական աշխատանքին:

Վարձու աշխատանքն ուրիշ ճյուղերում—հիմնարկություններում, տրանսպորտում, գյուղատնտեսության մեջ, ինչպես նաև տնայնագործների կամ արհեստավորների վարձու աշխատանքն իրենց արհեստանոցում,—այստեղ հաշվի չի առնվում:

20-րդ հարցում—արտադրական աշխատանքի ընդմիջումներին վերաբերում է աշխատանքը սեփական գյուղատնտեսության մեջ, տնայնագործական արհեստով զբաղվելը, տնային տնտեսությունը, բանակային ծառայությունը, ուսումը: Մի տարուց պակաս ընդմիջումը հաշվի չի առնվում:

21-րդ հարցում ցույց է տրվում վերջին զբաղմունքը արտադրություն մտնելուց առաջ: Այդ կարող է լինել՝ 1) վարձու աշխատանք, բայց ոչ արտադրության մեջ, օրինակ՝ հիմնարկություններում,—տրանսպորտում, բայց ոչ արտադրական պրոֆեսիայով, խորհտնտեսությունում, բատրակները և այլն. 2) ոչ-վարձու աշխատանք, տնայնագործները սեփական գյուղատնտեսություն, տնային տնտեսության մեջ. 3) բանակային ծառայություն, ուսում, ծնողների խնամքի տակ գտնվելը:

Սրան համապատասխան, հարկավոր է այս սյունակում գրել, օրինակ՝ հաշվետար գրասենյակում, կոնդուկտոր յերկաթուղում,



բատրակ, տնային աշխատող, տնայնագործ, տնային տնտեսուհի, սովորել է, յեղել է բանակում, յեղել է ծնողների խնամքի տակ և այլն:

22-րդ հարցում—հարվածայիններ պետք է համարել նրանց, վորոնք անհատաբար կամ բրիգադով պարտավորություն են վերցրել կատարել վորոշ արտադրական ցուցանիշներ և այդ պարտավորությունը ձևակերպել են համապատասխան գրավոր պայմանագրերով:

23-րդ հարցում—տնտհաշվարկային բրիգադ պետք է համարել այն բրիգադը, վորը տնտհաշվարկային պայմանագիր է կնքել վարչության հետ:

25-րդ հարցում—մենատնտես գյուղատնտեսական աշխատանք ունեցողների շարքին են պատկանում նրանք, վորոնք ունեն չընչապառական հողամաս կամ այլ տնտեսություն (անասնապահական, պարտեզ և այլն), անկախ նրանից՝ նրանք անմիջապես մասնակցում են գյուղատնտեսական աշխատանքներին, թե՞ նրանց ընտանիքի անդամներն են աշխատում:

Չպետք է մենատնտես գյուղատնտեսական աշխատանք ունեցողների շարքը դասել նրանց, վորոնք գյուղում ունեն միայն տուն ու բանջարանոց անձնական ոգտագործման կամ կովի համար և չունեն ցանքս, բանող անասուններ և այլն:



ՀՀ Ազգային գրադարան
NL0197691

Սրբագրեցին՝ Գար. Հակոբյան։ Հովհ. Հակոբյան

Հոյպոլիգրաֆի տպարան Գլավլիտ 8901 (բ) Պատվեր 2755 Տիրաժ 500

Հանձնված է տպագրության 27 օգոստ. 1932 թ.
Ստորագրված է տպագրելու 31 օգոստ. 1
Ար. ձև № Ա.

ՀՍՍՌ ՊԵՏ. ՀՐԱՊԱՐԱԿ. ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

331.88
Ք-89